ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

# ՀՐԱՄԱՆ

23 օգոստոսի 2021 թվականի N 147 - Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 89-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը և ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2019 թվականի մայիսի 7-ի թիվ N 55 - Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 89-Լ հրամանի 2-րդ կետով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«27. Ծառայության աշխատակիցները պարտավոր են աշխատանքի, այդ թվում՝ արտագնա ուսումնասիրությունների, ներկայանալ դասական ոճի հագուստով, բացառելով սպորտային հագուստը (այդ թվում ջինսե հագուստը): Արական սեռի ներկայացուցիչները պետք է կրեն կոստյում, սպիտակ երկարաթև վերնաշապիկ (բացառել կարճաթև վերնաշապիկի կրումը) և փողկապ, լինեն սափրված կամ խնամված բեղ-մորուքով: Ծառայության վարչական շենքում թույլատրվում է չկրել պիջակ: Բացառիկ դեպքերում՝ արտագնա ուսումնասիրությունների ժամանակ՝ տեղանքով պայմանավորված, թույլատրվում է կատարել բացառություններ: Սույն կետի պահանջները չեն տարածվում տեխնիկական աշխատանք կատարող անձանց և համակարգչային ցանցերի ադմինիստրատորների վրա:»:

2. Հավելվածը լրացնել նոր՝ 27.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«27.1. Համաճարակային իրավիճակներում Ծառայության ղեկավարի հանձնարարությամբ կարող են կիրառվել պարտադիր բնույթ կրող միջոցառումներ կամ սահմանվել լրացուցիչ սահմանափակումներ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Տ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

23.08.2021

X

ՏԻԳՐԱՆ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Signed by: ULIKHANYAN TIGRAN 2812830492

Երևան